





Կանոնագրության

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ

ԵՐ

ԱՌԱՋՆՈՐԴ ՀԱՃԱՌԱԿԱՆԱՑ



ԲՐԱՏԱՐԱԿԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



թիվ 32



ՏՄԱԳՐԻՉ

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ



Բնիկ



ՄԱՐԿԱՐԻԱՆ

ՄԱՐԿԱՐԻԱՆ

ՄԱՐԿԱՐԻԱՆ

ՄԱՐԿԱՐԻԱՆ

ՄԱՐԿԱՐԻԱՆ



ՄԱՐԿԱՐԻԱՆ

ՄԱՐԿԱՐԻԱՆ



ՄԱՐԿԱՐԻԱՆ



ՄԱՐԿԱՐԻԱՆ

ՄԱՐԿԱՐԻԱՆ

Պաշիկէն ետք, նստայ քովիկն իմ եղբօր,
 Ու դիտեցի դեմքը սիրուն ու աղուն.
 Ա՛հ, արթուն չէր, որ խաղայինք կուտս ու կուռ,
 Ու նուէրներ տայի անոր ես՝ բուռ բուռ:
 «Մայրի՛կ, ըսի յանկարծ, ձայնով մը կամաց,
 Այն հրեշտակն որ բերաւ եղբայրս՝ ո՛ւր գնաց:»

Տիարպէրիը

Լեւոն, ՍՐԱՊԵԱՆ

ՀԱՄԱՌՕՏ ԳՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Մ Տ Ա Ծ Ո Ւ Մ Ն Ե Ր Կ Ա Մ Գ Ա Ղ Ա Փ Ա Ր Ն Ե Ր

- Ի՞նչ է ՄՏԱԾԵԼԸ .
- Առարկաներու եւ իրողութիւններու վրայ գաղափարներ ու զգացումներ ունենալ :
- Ի՞նչ ըսել են ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ .
- Գաղափարներ են այն նախնական կամ տարրական ծանօթութիւններն ու ըմբռնումները զորս միտքը կամ հոգին զգայութեաց միջոցաւ կ'ունենայ, առարկայից եւ իրողութեանց վրայ :
- ԶԳԱՅՈՒՄՆ Ի՞նչ է .
- Հոգւոյն հաճոյ կամ անհաճոյ կերպով զգածուելուն, ազդուելուն կ'ըսուի Զգացում :
- Ի՞նչ կերպով կամ միջոցով կ'ըրացատրուին մտածումները .
- Մեր գաղափարաց ու զգացմանց արտաքին յայտարարութիւնն եղող նշաններով կամ ձայներով, որք երկու տեսակ են : Բնական եւ Արուեստական :
- Ա . Բնական նշաններն են Դեմքի գծեր կամ Նշաններ . այսինքն՝ երեսին այլեւայլ շարժումները, որք այլեւայլ իմացական շարժմանց հետ գրեթէ կ'զուգործանան . այսպէս են աչքի, յօնքի, ունչքի, պինչքի պէս պէս ձկտումները, պռստումները, ծամածռումները, որով ուրախութիւն, սէր, գուլթ, զգուանք, բարկութիւն, տհաճութիւն, ցաւ, եւ ուրիշ ասոնց նման զգացում կամ կիրք կ'յայտնենք :
- Բ .— Անդամոց նշաններ, այսինքն՝ շարժումներ, որով գլխի, ձեռքի, մարմնոյ այլեւայլ շարժումները կամ գիրքը կ'հասկցուն, եւ որով նոյնպէս կ'յայտնուին հոգւոյն այլ եւ այլ զգացումներն ու յուզումները :

Գ. Անյօղաւոր հնչումներ, այսինքն՝ այն գոչիւնները զորս այլեւայլ զգացումներ, ինչպէս վիշտ, զարմանք, զայրութ, եւ այլք մարդոց հանել կուտան, ինչպէս՝ ո՞հ, վա՛յ, ա՛յ, հանդերձ այլովք, որք ձայնարկութիւն կ'կոչուին, և ամբողջ իմաստներ յայտնող հնչումներ են:

— Արուեստական նշաններն որո՞նք են.

— Բնական նշաններուն սակաւութիւնն ու անբաւականութիւնը հարկադրած են մարդիկն արուեստական նշաններ հնարելու, այսինքն՝ այնպիսի նշաններ որք ոչ թէ մարդուս ինքնագիւտ և բնածին են, այլ կամայական, ուստի և այլեւայլ ժամանակաց ու տեղեաց նայելով՝ զանազան են:

— Այս երկու տեսակ նշաններն ընդհանրապէս ի՞նչ անունով կ'կոչուին:

— Ընդհանուր անունով կ'կոչուին Լեզու, ուստի եւ երկու լեզու կայ. Բնական լեզու որ բնական նշաններուն դրութեանը կ'ըսուի, որ վերել բացատրուած է, և Արուեստական լեզու որ արուեստական նշաններուն անունն է:

— Արուեստական լեզուն քանի՞ տեսակ է.

— Խօսուն լեզու և գրաւոր լեզու:

— Խօսուն լեզուն նշաններն որո՞նք են.

— Խօսուն լեզուն նշաններն են՝ խուլ ու համրներուն գործածած արուեստական նշանները, զորս 18րդ դարուն վերջերը հնարեց Էբէ անունով քահանայ մը. հին հռապրական նշաններ և մանաւանդ Բարբառը:

— ԲԱՐԲԱՌՆ ի՞նչ է.

— Բարբառը՝ յօդաւոր հնչումներու բաղադրութիւններէ կ'կազմուի: Յօդաւոր հնչում բռնելով կ'իմացուին ձայնաւորներէ և բաղաձայններէ կազմուած որոշ և յստակ հնչումներ, որք նութական լեզուին, շուրթերուն, ատամներուն և կոկորդին այլեւայլ շարժումներովն ու խաղերովը կ'հանուին: Իւրաքանչիւր յօդաւոր հնչում վանկ է, եւ վանկերու բաղադրութիւնները, երբեմն նաեւ պարզ յօդաւոր հնչումները (վանկեր) բառ կ'ըսուին: Մարդիկ յօդաւոր հնչումներն և անոնց բաղադրութիւնները, այսինքն՝ բառեր, ըստ հաճոյս և միաբան հաւանութեամբ իրենց գաղափարներուն նշան ըրած ըլլալով՝ ամէն անգամ որ բառ մը կ'հնչեն, անոր սեպհականուած գաղափարը կ'հասկնան: Մարդիկ այս նշանները բնական և արուեստական կերպով մէկտեղ բերելով կ'կազմեն խօսքեր, որք խորհուրդներու նշաններ են:

— ԳՐԱԽՈՐ լեզուն ի՞նչ է:

— Գրաւոր լեզուով կ'իմացուի տեղով կամ ժամանակով հեռուն գտնուողներուն մեր գաղափարներն ու խորհուրդները հաղորդելու համար հնարուած նշաններու դրութիւնը որ Գիր կ'կոչ-

ուի: Աս նշանները և անոնց բաղադրութիւնները հնչմանց ու բառից պատկերներն են:

— Գիրը քանի՞ կերպ է:

— Երկու. Ձեւաւոր գիր, և Ձայնաւոր կամ Այբբեմական գիր:

— Ո՞րն է ձեւաւոր գրութիւնը:

— Ձեւաւոր գրութեամբ կ'իմացուի նախ՝ նշանակական գրութիւնը: Նշանակ (symbole) կ'ըսուին այն ձեւերը որք բնական իրաց պատկերներ ըլլալով՝ ուրիշ գաղափարներ նշանակելու կ'գործածուին, այսպէս առիւծը՝ գօրութեան, օձը՝ խորամանկութեան, աղուէսը՝ խորագիտութեան, շունը՝ հաւատարմութեան, մանիշակը՝ համեստութեան, օրիորդ մը ձեռքը կշիռ՝ արդարութեան նշանակ համարուած են: Նշանակական էր Եգիպտացւոց մէկ տեսակ գրութիւնը որ Մեհենական այսինքն Սրբազան գիր կոչուած է: Ձեւաւոր գրութիւն են երկրորդ՝ Ձինաց կամ Սինէացիներուն գիրերը, որք ոչ թէ յօդաւոր հնչումներու այլ գաղափարներու կամայական նշաններն են. ուստի և անոնց մէջ որչափ բառ կայ այնչափ նշան կայ: Ձեւաւոր գրութեան կը վերաբերին նաեւ (արարական) թուանշաններն ու ալճէպրայական նշանները:

— Ո՞րն է ձայնաւոր գրութիւնը:

— Ձայնաւոր գրութեամբ կ'իմացուին այբուբենական գրերը, որք ուղղակի գաղափար չեն յայաներ, այլ մարդկային ձայնին այլ եւ այլ հնչումներուն պատկերներն են, և պարզ կամ բաղադրեալ կերպով գաղափարներ ցուցնելու կամայաբար որոշուած են: Այժմու հեռագրական նշանները և հին Սեպաձեւ գրերը ձայնաւոր գրութեան կը վերաբերին:

— Նշաններն ի՞նչ ազդեցութիւն ունին:

— Նշանները, մանաւանդ արուեստական նշանները կամ լեզուն, մտքին զարգացմանը մէկ գլխաւոր նշանն են: Լեզուին միջոցաւ մեր գաղափարները նիւթական նշաններու կամ բառերու հետ կապուելով՝ գաղափարաց, մանաւանդ վերացեալ և ընդհանուր գաղափարաց, իբր թէ մարմին և հաստատութիւն կուտանք: Առանց լեզուի շատ գաղափարներ, նիւթական իրաց գաղափարներն անգամ, գիւրաւ կրնան կորսուիլ կամ մոռացուիլ: Եթէ ոչ անհնարին՝ գէթ շատ դժուարին ու անկատար պիտի ըլլար՝ վերացնել, լուծել, բաժնել, իմաստասիրել, որոնք մտքին գլխաւոր գործողութիւններն ու գիտութեան հարկաւոր միջոցներն են:

— Լեզուի մէջ սորվելու քանի՞ բան կայ:

— Երկու. գաղափարաց նշան եղող բառերու դրութիւն մը և անոնց միջոցով խօսք կազմելու օրէնքը:

— Գաղափարաց նշան եղող բառերը սորվելու մէջ ի՞նչ կը պահանջուի:

— Կ'պահանջուի բառերուն հետ, որ նշաններ են, անոնց նշանակած գաղափարները յստակ և որոշ ըմբռնել. եւ ասիկա կ'ըլլայ բառերուն ճիշտ սահմաններ տալով, ապա թէ ոչ գաղափարները հաստատուն և որոշ նշաններ ունեցած չեն ըլլար, եւ անոնց ու բառերուն միջեւ տեղի չեն ունենար այն բնական կապակցութիւնը՝ որ նշանին ու նշանակեալ իրին մէջտեղ հարկու կ'պահանջուի: Ասկէ կ'ծնանին բացատրութեան մէջ դժուարութիւն և խառնակութիւն, և մտքի զարգացման դէմ արգելքներ, քանզի գաղափարներն որոշ նշաններու աւանդելով է որ միտքն իր գործողութիւններուն մէջ առաջ կ'երթայ:

— Խօսք կազմելու օրէնքն ի՞նչ է:

— Խօսք կազմելու օրէնքն այն բնական և միօրինակ կերպն է որով միտքը կ'կազմէ իր դատումները, որոց իրարու հետ նոյնպէս բնական և միօրինակ կերպով կապուելն կ'ելլէ իմաստ կամ մտածութիւն:

— Ո՞ր ուսումը կամ գիտութիւնն է որ աս օրէնքներուն վրայ կ'իսօսի:

— Ընդհանուր քերականութիւնը որ ամէն լեզուի համար միեւնոյնն է, կ'տարբերի մասնաւոր քերականութենէն որ իւրաքանչիւր լեզուի յատուկ կանոններուն վրայ կը խօսի: Ձոր օրինակ. բառերուն բաժանումը, խօսքի մը՝ նախադասութիւններէ, իւրաքանչիւր նախադասութեան ալ՝ ենթակայէ մը, Ստորոգելիէ և դիմաւոր բայէ մը բաղկանալն՝ Ընդհանուր քերականութեան կը վերաբերի: Անուանց այսչափ կամ այնչափ հոլով և հոլովմունք ունենալը, բառերուն այսինչ կամ այնինչ կերպով իրարու հետ համաձայնիլը և խօսքի մը մէջ շարունակուիլը՝ Մասնաւոր քերականութեան նիւթ են:

— Միտքն իր դատումներն ի՞նչպէս կ'կազմէ:

— Գոյացութեան մը վրայ յատկութիւն մը հաստատելով. ուստի և ամէն դատում երեք մասէ կ'բաղկանայ. ենթակայէ մը՝ որ գոյացութիւնն է, Ստորոգելիէ մը՝ որ յատկութիւնն է և Բայէն որ ստորոգելին կամ յատկութիւնը ենթակային կամ գոյացութեան վրայ հաստատող մասն է: Ասոր համեմատ նախադասութիւնը, որ մտքին դատողութեանը խօսքով բացատրութիւնն է, յիշեալ երեք մասերը յայտնի կամ լռելեայն կ'պարունակէ:

Հայրս բարի է. ահա դատում և միանգամայն նախադասութիւն:

ԱՐՄԷՆ



ԳԻՏՈՒԹԻՒՆԸ՝ ԳԱՒԱՌԻՆ ՄԷՋ

(ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ)

(Շարունակութիւն 30րդ թիւէն)

Կար ատեն մը, երբ քերականութիւն զոց գիտցող մը ամենէն ուսեալը կը համարուէր եւ գրաբարախառն անճոռնիութիւններով լղրճուած ճառ մը կարդացողը՝ մատով ցոյց կը տրուէր իբրեւ... հայկարան, և այնքան բարձր համբաւի կ'արժանանար, որքան անհասկնալի և անիմաստ ըլլար իր ձափռտուքը: Անանկներուն ասպարէզը շատ նեղցած է հիմա, նոյն խոյ գաւառներու մէջ: Վաղը, ուշ կամ կանուխ, միեւնոյն բաղդը պիտի վիճակի գիտունիկոսի հովեր առնող մեր թերուսներուն. լուրջ ջանքեր հարկ են ուրեմն, չենթարկուելու համար վերջնական լքումին: Գիտական ուսումները գոց ընելու և գոց ընել տալու սահմանուած չեն: Զանոնք իւրացնել պէտք է, անոնցմէ օգտուելու համար՝ թէ պաշտօնին և թէ կեանքին մէջ:

Գալով բժիշկներուն, կարծէ գեթ քանի մը տողով ճշդել անոնց ունեցած և ունենալիք դերը՝ գաւառին մէջ: Տեսակէտով մը, իրաւունք ունի Տոբթ. Յովսէփ Տ. Ստեփանեան, որ Մասիսի Տրդ. թիւով խստօրէն կը քննադատէ ռամիկ ժողովուրդին թիւր վերաբերումը՝ բժիշկներուն նկատմամբ: Իրաւ. շատ աղէտալի նախապաշարում մը բոյն դրած է տգէտ համայնքներու մէջ, որոնք ընդհանուր բժշկութեան վրայ գէշ գաղափար մը կազմած են, և միշտ գէշ մեկնութիւններ կուտան անոնց բոլոր արարքներուն: Բայց ասիկա ի՞նչէն ծագում առած է: Յարգելի տօբթէօռը չէ քննած: Իրաւ. է թէ արժանաւոր բժիշկներ ունինք գաւառներու մէջ ալ, հմուտ և անշահախնդիր միանգամայն, որոնցմէ շատերը՝ ճշմարիտ բարերարի համբաւի մը տիրացած են: Բայց ժողովուրդին աննպաստ ըմբռնումին աղբիւրը փնտռելու է այն կարգ մը թեթեւօղիկ գաւազանաւորներու ընթացքին շուրջ՝ որոնք սրածայր մօրուքի մը հմայքին և տաքաչիարհիկ շարժումներու խաբէութեան մէջ կը փնտռեն իրենց յաջողութիւնը: Առաջին անգամն է որ կը հանդիպիմ Տօբթ. Յ. Ստեփանեանի գրչէն ելած միակողմանի գրութեան մը, որովհետեւ վարժուած էի միշտ հաճոյքով կարդալու անոր սրամիտ, լուրջ ու չըջահայեաց տեսութիւնները, գիտական զանազան խնդիրներու մասին:

Բժիշկներն ալ, իբրեւ ուսեալ, շատ կարեւոր դիրք մը կըրնային գրաւել, ուսուցիչներուն հետ, գաւառին մէջ: Նիւթական ու բարոյական մեծամեծ յաջողութիւններ չպիտի պակսէին թէ մէկին և թէ միւսին. ու իրենց գործէն, զբաղումէն դուրս ալ, շատ բարերար դեր մը կրնային կատարել, գիտութիւնը ռամկացնելու, ժողովուրդին ծանօթացնելու գեղեցիկ գործին մէջ: Եթէ երեւան ելած չըլլային կարգ մը ինքնակոչ մակաբոյծներ, որոնց շահամուլ տգիտութիւնը՝ խարդախութիւններով խճողուած, իսպառ ջնջեցին հանրութեան համարումը, գաւառական ընդհանուր բժշկութեան մասին:

Այս պարագային, եթէ շատ տուաջ ալ երթանք, հազիւ իրաւունք պիտի ունենանք ռամիկը մեղադրելու՝ իբրեւ չափազանցող, պարագայ մը որուն չքմեղանքն ալ իր մէջ է արդէն:

Բայց բնաւ չենք կրնար համոզուիլ տոքթ. Յովս. Տ. Ստեփանեանի հետ, թէ ժողովուրդին յոռի կարծիքներն հիմնովին անտեղի ըլլան, թէ ժողովուրդը ապերախտ է (°) եայլն:

Մէկդի դնելով այս բոլորն ալ, կրնանք որոշապէս արձանագրել հոս թէ՛ ուսեալներու անձնական ուսումնասիրութեամբ լուսարանուած մէկէ շատ աւելի ցաւառիթ պատմութիւններ պակաս չեն, կարգ մը բժիշկներու շահատակութեան մասին, թէ՛ իրական տօնականներ անպակաս են, որոնցմով այլեւս հաստատուած է որ 1. — Բժիշկներէ ոմանք՝ չարաչար և անխղճօրէն կը գործածեն արհեստին բացառիկօրէն՝ ընդարձակ իրուստութիւնը, որուն կ'ապաւինին իրենց ամէն մէկ անխոհեմ ու ձախլիկ արարքէն յետոյ, որուն արդիւնքը մահ եղած է շատ անգամ: 2. — Շփացած տգէտներ պակաս չեն, ինքնազարգացումէ զուրկ եւ փորձառական հմտութեան ոչ-հետամուտ: 3. — Շահամուլներն աւելի բազմաթիւ են, այցեգիրներու թիւն աւելցնելու համար հիւանդը չարաբողներ եայլն: Բոլոր ասոնք բազմապիսի դիպուածներու, քստմնելի եղելութիւններու ստուերագիծներն են սոսկ, զորս մանրամասնել կարելի չէ, ա՛յնքան առատ էջերու պէտքը կ'զգացնեն ասոնք:

Մի առ մի ծանօթանալէ յետոյ երեք դասակարգերու մտաւորական վիճակին, ընդհանուր ակնարկով մը այլեւս կրնանք թափանցել այն առեղծուածային անտարբերութեան՝ որով գաւառի համայնքը կը յատկանշուի, ամէն անգամ որ հանրագումարական վրայ խօսուի կամ գրուի: Այլ կրնաք հասկնալ, կարծեմ, թէ ինչո՞ւ բարքերը կ'իյնան, կ'ապականին եւ ֆիզիքական կեանքին հետ բարոյականն ու մտաւորականն ալ կը վատթարանայ: Մինչ միեւնոյն ատեն, տնտեսական անակնկալ ան-

կումներն անպակաս են մեր մէջ։ Որովհետեւ տխուր շարժառիթներովը հիւսուած են թէ շուկայիկ և թէ առտնին կեանքը։ Հոն շահերը գիտակցական կռուանէ զուրկ են, հոս՝ սպառումները աննկար և անհաշիւ։— Պիտի դարմանաք, երբ ըսեմ թէ՝ տան ծախքերն օրը օրին նշանակելու սովորութիւնն իսկ անծանօթ է մէնուն ալ։

Նախապաշարումներով կաշկանդուած առողջ ձգտումներէ բուրովին զուրկ այսպիսի ապրուածք մը, որ գէթ հին, դարաւոր բարքերու անկեղծութիւնն ալ չի կրեր, գոյութեան ինչ իրաւունքն կրնայ ունենալ ուրեմն։ Սա տեսակ դարու մը մէջ, ուր գիտութեան հսկայ յառաջդիմութիւնները նոր լոյսեր կը սփռին բնութեան ամէնէն մութ առեղծուածներուն վրայ, երբ կեանքը գեղեցկացնելու, երջանկացնելու ծառայող նորանոր գիւտեր իրարու կը յաջորդեն, ամօթ չէ՞ երեւի իբրեւ լարուած մեքենայ, անգէտ ապրուածքի ամէնէն տարրական կանոններուն, անգիտակցօրէն ապրիլ, աշխատիլ ու մեռնիլ, առանց երբեք հետաքրքրուելու եւ գիտնալու թէ ինչո՞ւ և ի՞նչպէս կ'ընենք այս բուրով, թէ՝ ինչ ընելու ենք լաւագոյն կերպով, իբրեւ մարդ կատարելու համար մեզի վիճակուած բոլոր դերերը, կարելի եղածին չափ առանց տուժումի համակերպելով բնութեան պահանջումներուն։

Թողունք թէ այսքանն ալ չի բաւէր արդէն, և մենէ իւրաքանչիւրն իր աշխատութեան բջիջն ունենալու է, գիտական բեղմնաւորութեան գէթ համեստ բաժին մը հրիտակելու համար յաջորդին, իր գոյութեան իրաւունքին իբրեւ վաւերանիւթ։

* * * Որո՞նք են, ուրեմն, այն միջոցները, որոնցմով կարելի պիտի ըլլայ գիտութիւնը ժողովուրդին ծանօթացնել, արմատապէս դարմանելու համար սգիտութեան տխուր հետեւանքները։

1.— Մամուլը, 2.— Կղերը, 3.— Դպրոցները։

Ա.— Մամուլին վրայ խօսելով աւելորդ պիտի ըլլար, կարծեմ, չեչտել անոր դերին աւագ կարեւորութիւնը, հանրագումար ձեռնարկներու տեսակէտով։ Ուրիշ տեսնի թողելով ուսումնասիրել թէ՝ մամուլն իմացական ու բարոյական ինչ հզօր հմայք ունի գաւառացի ժողովուրդին համար, հիմա սխալած չենք ըլլար եզրակացնելով թէ հակառակ կարգ մը ձեռնածուներու չահամով մեքենայութիւններուն, որոնցմով մամուլի անունն աւրող թերթեր կ'երեւին դեռ, շատ գռեհիկ դերեր խաղալու նուիրուած, ու հակառակ անոր, որ գաւառացիներին դիմակին տակ՝ փնթի և ափեղցփեղ արկօթերէնի մը լզրճուկ արատաւորումները կը

տեսնենք հրապարակի վրայ, դարձեալ համարձակօրէն կրնանք ըսել թէ մամուլն իր պատկառանքը բոլորովին չէ կորսնցուցած տակաւին, գաւառացիներուն համար: Բայց թէ հինին վայելած համարումը հիմակունանին բաղդատելով, ափսոսանք մը պիտի զգանք, ատոր շարժառիթը չէ թէ մամուլի ամբողջութեան, անոր ընդհանուր ուղղութեան՝ այլ այն լրագրական մակարոյժ գրողներուն պէտք է վերագրել, զորս մաքրելու, աւելու էր հրապարակէն:

Ուստի գիտութիւնը գաւառներու մէջ ծանօթացնելու առաջին միջոցը մամուլին կը մնայ: Ու երկու հարցում կը ներկայանան մեր մտքին: Ի՞նչ բրած է մամուլը, եւ ի՞նչ կրնէ, այս մասին:

Պիտի գարմանա՞ք, երբ ըսեմ թէ՝ գիտական հրատարակութիւնները շատ աւելի յաճախաբէպ էին հին ատեն քան հիմա: Այս վարմանքը ցաւագին տպաւորութեամբ մը կը խառնուի, երբ յիշենք այդ չըջաններուն տիրող խորունկ անտարբերութիւնը և այն պաղ ընդունելութիւնը, որուն կը հանդիպէր այդ կարգի ամէն հրատարակութիւն, մինչ հիմա ամէն ոք գիտութեան ծափուն ունի, և անհամեմատօրէն աւելի արժանաւոր յաջողութիւն մը պիտի գտնէին գիտական հրատարակութիւնները, որոնք կը պակսին դժբաղդաբար:

Իբրեւ ամէնէն նպատակայարմար ու ժողովուրդին դիւրամատչելի հրատարակութիւն չենք կրնար չը յիշել Տօքթ. Իւթիւճեան պէյի՝ Ժողովրդ. Մատենադարան Ընդհ. վերնագրին տակ հրատարակած քանի մը շարք տետրակները, գիտական և առողջապահական ծանօթութիւններով հարուստ, լեզուով ու գինով միանգամայն շատ դիւրամատչելի, որոնց նմանները կը փընտռուին միշտ և ամէն կողմ: Ասկէ ետքը, յիշելով միեւնոյն ժամանակներու քանի մը դասական հատորները, Վիէննական և վենետիկեան հայրերու հրատարակութեանց հետ, որոնց մէջ ընդարձակ ու կարեւոր գործեր ալ չեն պակսիր, կ'անցնինք մասնաւորապէս մատնանիչ ընելու Մամուրեանի թարգմանութիւններէն մէկ քանին և «Մասիս»ի արտօնատիրոջ կողմէն հայերէնի վերածուած՝ Ժիւլ-Վէրնի շարք մը գիտական վէպերը: Ատոնք գերազանցօրէն նորօրինակ ու շահեկան շաւիղ մը բացին, հրապարակի վրայ, գործնականապէս հաստատելով թէ գիտութիւնը ռամկացնելու ամէնէն հրապուրիչ և ամէնէն արդիւնաւոր միջոցը վէպն է: Հիմա, մանաւանդ, այդօրինակ գիտական վէպերը ճշմարիտ վայելք մը պիտի ըլլային բոլոր անոնց որոնք ալ ըմբռնած են ոչնչութիւնը ուսուցիչ ու շատախօս մեր սովորական թերթօններուն:

(Շար.)

Լ. ՍՐԱՊԵԱՆ

ՍՐՏԻ ԷԶԵՐ

ԱՐՁԱԿՈՒԲՈՒ

Գ. ՕՋԱՆԵԱՆԻՆ

Դըպրոցին մէջ, անկասկած
Մաշեցան մեր միտք ու միս,
Դըրեմէ ճիշդ տասն ամիս
Սեղան, տետրակ, զիրք զըրկած:

Ամբան զալուն հետ, մէկէ՛ն
Աղւոր աղւոր մեր դասեր
Կորսընցուցի՛ն իրենց տէր,
Համ չենք առներ ո՛չ մէկէն:

Պըճըրներ են հարսի պէս
Լեռն ու հովիտ, դաշտ, արօտ,
Իրենց կուրծքին բիւր նարօտ
Կապած՝ սիրուն ու պէս պէս:

Տա՛ դիմացի խատուտիկ
Վառ գոյներէն մեր հոգի
Կարծես խկոյն կը մոզի՛,
Ի՞նչպէս ընենք ալ տիտիկ:

Տեղնէն ելնենք երբ առտուն,
Մեզի կարծես թէ բարեւ
Կուտայ աղւոր տա՛ արեւ՝
Եթերին մէջ զուարթուն:

Թըռչուններու մեղմ զեղզեղ,
Կարծես, հրաւէր կը կարդան,
Որ դասին ու վարժառան՝
Ա՛լ հրաժեշտ տանք շրջեղ:

Ձմրան սա շոգ օրերուն,
Տա՛ պաղորակ լին, գետակ,
Փրուլած լեռան ոսքին տակ,
Հըրաւէրներ չն՞ն սիրուն:

Դաշտներուն մէջ, զառն ու ուլ
Գրչոր-մայիս կը խաղան,
Ի՞նչպէս չուղէ հէգ տըղան
Ատկէ օրինակ առնուլ:

Ծաղկէ ծաղիկ երբ նըստին
Թիթենիկներ գունամեւ,
Մանուկները խօ՛ւ, թիթեւ,
Հանգիստ կ'ըլլա՞ն ալ ասդին:

Բոլոր ասոնք, ի հարկէ,
Լաւ ճանչնալով մեր մեծեր,
Մեզ ազատել են փորձեր
Դըպրոցական նեղ յարկէ:

Ա՛լ ճիշդ վաղն է արծակուրդ,
Աչքերնիդ լո՛յս, ո՛վ տըղաք,
Ուզածնուդ չափ կը խաղաք՝
Գատկըռտելո՛վ ցըլագուրդ:

Մ՛ն, ընկերներ ծաղկատի,
Արծակելով մեր ծայնիկ,
Երգենք իբրեւ դեղձանիկ,
Մինչեւ վազանս աւարտի:

Մ. ԻՍՊԻՐԵԱՆ





1. — Դարբին հայրիկը կերակուր ուտելու գնաց, գործիքները հոն ձգեց: Դարբնու ծիւն ընելը դժուար ըլլալու չէ եւ շատ զուարճալի է պատին վրայ գամ մը գամել: Ահա մեծկտկ գամ մը: Այժմ կը տեսնէք թէ՛ Պարոն Զարեհ ի՛նչպէս մեծ մուրճով մէկ մը զարնելուն զամը պատին մէջ պիտի մղէ: Այս գամը պէպէքը կախելու համար է. բայց պէպէքին մտրէն իսկ չանցնիր այս բանը:



2. — Զարեհ շատ ուժով է եւ կը կարծէ թէ հայրիկին պէս մէկ ձեռքով մուրճը կրնայ վերցնել, մինչեւ երկու ձեռքով անկարող է գետնէն վերցնել: Ասի զարմանք կը պատճառէ օրիորդ Հայկունիին. ըսել է մուրճերը ծանր են եւ հայրիկներն իրենցմէ շատ ու շատ ուժով: Բաւական աշխատեցաւ ու չարչարուեցաւ որ մուրճը վեր առնէ, բայց անկարելի ըլլալը տեսնելով՝ ուրիշ աւելի դիւրին ճար մը գտնել հարկ եղաւ:




3. — Միտքը բան մը եկաւ, պէտք է ուրիշի մը օգնու-
նեամբ կատարել այս գործը:

Օր. Հայկունհի գամը ուղիղ մը կը բռնէ եւ Զարեհ երկու-
ծեռքով մուրճը պիտի վերցնէ եւ վարպետութեամբ գամին զը-
խուն ուժով մը պիտի զարնէ, որով պատին մէջ պիտի մղուի:
Պէպէքը որքա՞ն պիտի զարմանայ, երբ ինքզինքը պատէն կախ-
ուած տեսնէ:



4. Պ. Զարեհ բոլոր ոյժը ժողուելով, մուրճը գետնէն
վերցուց, Հայկունհի գամը ուղիղ բռնած կ'սպասէր. իսկ պէպէքը
հարցնող չկար, որովհետեւ երկուքն ալ անոր համար կ'աշխա-
տէին: Հարուածը իջաւ... զրա՛ր... գամը դարձաւ... մուրճը
Օր, Հայկունհի մատներուն եկաւ: Խեղճին մատները շատ ցաւե-
ցան, եւ որ աւելի գէշն է, մատիկներէն արիւն ցայտել սկսաւ:
Իսկ Զարեհ անդիի ծայր վախցաւ ու սիրտը դող ելաւ:



5. — Ամէնը այս չէ: Սոսկալի մուրճն ինկաւ Ջարեհի ոտքերուն վրայ: Հայկունհի կուլայ ծեռքին համար, Ջարեհ ոտքին համար. երկուքն ալ փոքրիկ այծերու նման վեր վեր կը ցատկէին: Այն ժամանակ իմացան թէ՛ դարձին ըլլալը կարծուածին չափ դիւրին չէ՛ եղեր. պէտք է ամէն բան սորվիլ:

ԲԱՐՈՅԱԿԱՆ — Պէպէքը պատէն կախուելու վտանգէն ազատեցաւ. եթէ եղածը զիտնար՝ ապահով եմ որ Պարոն Ջարեհի եւ օրիորդ Հայկունհի ըսեր թէ՛ պէտք չէ առանց հրամանի որ եւ է բանի դպչիլ:

ԶՈՒԱՐՃԱԼՐ

ԱՃԽԱՐՀԱԳՐՈՒԹԵԱՆ ԴԱՍ ՄԸ

(Շարունակութիւն 30 թիւէն եւ վերջ)

ԴԱՍԱՏՈՒՆ. — Ունցնինք երկրագունդիս «Ֆիզիքական» կա-
ցութիւններուն: Ինչպէս զէտէք՝ երկրագունդս հարթ չէ, շատ
մը բարձունքներ կը կրէ որոնք լեռ կը կոչուին: Ատոնց մէջ
նշանաւորներ կան ինչպէս «Մօնպլան»ը որ 4810 մէթր բարձ. ու-
նի և Եւրոպիոյ ամէնէն մեծ լեռն է, Հիւսիսային Ամերիկայի մէջ
ամէնէն բարձրն «Էլի» լեռն է (5520 մէթր). Իսկ հարաւային
Ամերիկայի մէջ «Աքօնքակուա» լեռը որ 6970 մէթր բարձր է:

Ափրիկէի մէջ նշանաւոր է « Բիլիմանճառ» լեռը (6000 մէթր) սակայն աշխարհիս ամէնէն բարձր լեռը «Կաուրիսանքար» ըստուած է—8840 մէթր—որ Ասիոյ Հիմալայա լեռանց շղթաներուն մէջ կը գտնուի: Չի մոռնանք նաև որ ծովերուն տակն ալ հարթ չէ, հոն կան անտառներ, դաշտեր: Խորութեան մասին՝ Միջերկրական ծովուն մէջտեղերը մինչ 4570 մէթր կուգայ. Սառուցեալ Ովկիանոսին մէջ մինչ 3390 մէթր չափուած է. Սեւ Ծովը ունի մինչ 1870 մէթր խորութիւն. Հնդկական Ովկիանոսը մինչ 6205 մէթր, Ատլանեան Ովկիանոսը մինչ 8341 մէթր և վերջապէս Խաղաղական Ովկիանոսը մինչ 9615 մէթր խորութիւն մը: Գալով աշխարհիս վրայ գտնուած կղզիներուն, ատենք բազմաթիւ են. սակայն գլխաւորները 53 հատ կը համրուին: Նմանապէս 73 հատ ամենամեծ լիճեր կան երկրագունդիս վրայ: Մեծ գետերուն նկատմամբ ալ պէտք է ըսեմ որ Եւրոպայի մէջ 22 հատ կան գլխաւորաբար. Ասիոյ մէջ 10 հատ, Ափրիկէի մէջ 7 հատ. Ամերիկայի մէջ 11 հատ:

Բ. առակ. — Եւ գետերը միշտ կը հոսին հէ՞ միւսիւ:

Դասասու. — Տարակոյս չկայ:

Բ. առակ. — Բայց ո՞ւսկից կը բղխին ատոնք:

Ձ. առակ. — (Բ. առակերսին) Պալ-խապախի, չե՞ս գիտեր որ գետերը իրենց աղբիւրներն ունին որոնք սովորաբար լեռներուն մէջ ծագում կ'առնեն:

Բ. առակ. — (Ձ. առակերսին) Հելվանի-խապախի դուն լուէ, քեզի խօսք չիյնար: Եթէ աշխարհիս վրայ անձրեւ չի տեղար՝ անշուշտ գետերը պիտի ցամքէին:

Դասասուն. — (բարկանալով) Նգովից արմատներ՝ հոս բազա՞ր. երի է որ իրարու թթումներ կը շռայլէք:

Դ. առակ. — Անոնք կատակ կ'ընեն միւսիւ:

Ե. առակ. — Գետերն իրենց աղբիւրներն ունին որոնք շատ անգամ դժուար եղած է գտնելն. զոր օրինակ՝ Նեղոս գետինը.....

Ը. առակ. — Այդ մասին կարեւոր կը համարիմ յիշելու տօք-թոռ Շոր.....

Ձ. առակ. — Կերեւայ թէ անվարտի էր.

Ը. առակ. — (Ձ. առակերսին) Տօքթ. Շորքիմ ըսել կուգեմ:

Ե. առակ. — Սխալ, սխալ, անգլիացի տօքթ. Տավիտ Լիվին-կսթընն էր որ Նեղոս գետին աղբիւրները գտնելու ելաւ դէպի 1860ին:

Դասասուն. — (Ե. առակերսին) Աֆէրիմ տղաս. տուած գտներդ չես մոռցեր, քեզի բարենիչ մը պիտի տամ:

Գ. առակ. — Ինծի ալ տասը բարայի մահալլեայի առ միւսիւ :

Ա. առակ. — Որկրա՛մու. . .

Թ. առակ. — Փորս անօթեցաւ միւսիւ :

Տղաքները աղմուկ մըն է կը բրցընեն, մինչ դասախօսու-
թեանց վերջանալուն զանգակը կը հնչէ :

Դասատուն. — Էյ պէ էյ, աս ի՞նչ բարոսը ե. արդէն ժամա-
նակն ալ եկաւ, դասը լրացած է ուրեմն, Յտեսութիւն. (ոտքի
կ'ելլայ) :

Տղաքներ միաբերան. — Յտեսութիւն, կեցցէ մեր միւսիւ Պա-
կասեանցը, երթայք խաղաղութեամբ :

ՀԱՃԻ ՄԻԻԹԱՐ

ԴՊՐՈՑԻՆ ԴՈՒՌԸ

Թէեւ քանի մը ամէն ի վեր զանգակները՝ դպրոցներու վե-
րաբացումը կը հնչեցնեն խնդագին, անցեալ երկուշաբթի միայն
կրցայ անդրանիկ զաւակս առաջին անգամ ըլլալով դպրոց ա-
ռաջնորդել : Այդ մեծ օրուան առաւել կանչեցի անիկա իր երկու
եղբայրներուն հետ և այսպէս խօսեցայ :

— Այս տարի ութը տարեկան եղար, Վիմա դուն կարդալ ու
գրել գիտնալու էիր, բայց ես ուզեցի որ դեռ բան մը չսորոխս,
պզտիկ տարիքիդ մէջ քեզ դպրոցի մը մէջ փակելու տեղ գիւ-
ղերը տարի, դաշտերը պտտցուցի : Քեզի ու եղբայրներուդ հա-
մար հինգ տարի տունս տեղս անդին ասդին տարի պտտցուցի,
և այս զօհողութիւնը իմ շահերուս վրայ՝ կ'ընէի ձեր աղէկու-
թեանը, ձեր օգուտին համար : Այն տարիքին մէջ ուր շատեր
դպրոցի գրասեղաններու վրայ կ'աշխատին՝ ղուք վազվեցիք
լեռներուն մէջ, ծովեզրին վրայ, Ասանկ ընելովս աղէկ ըրած ե-
ղայ. վստահ եմ թէ այո : Ասիկա լաւ միտքդ պահէ, և երբ կը
տեսնես թէ դասընկերներէդ շատ ետ մնացեր ես՝ աշխատէ ա-
նոնց հասնելու, բայց ինծի բնաւ մի մեղադրեր քեզի քիչ մը
ուշ դպրոց դնելու : Ուրեմն, շարունակեցի, այսօր դպրոցական
մըն ես. ահա առիկ պայուսակդ. կամաց կամաց պիտի մեծնայ,
պիտի ծանրանայ ատիկա, մէջը տետրակներ պիտի դնեն գիրքեր
պիտի դնեն զորս դուն պիտի սորվուիս ու հասկընաս, դասա-
տուն պիտի կարդայ եւ բացատրէ թէ ի՞նչ ըսել կ'ուզեն անոնք,
յետոյ պիտի ուզէ տեսնել թէ դուն ալ սորվեր ու հասկցե՞ր ես :
Եթէ պէտք եղածին պէս պատասխանես՝ «լաւ աշակերտ մը»

պիտի ըլլաս. ընդհակառակը եթէ գէշ պատասխաններ տաս «ապուշ մը» պիտի ըլլաս, Ընտրութիւնը քեզի կը ձգեմ, եթէ դասերուդ համար ազէկ թիւեր առնես բան մը մի յուսար ինչեթէ գէշ թիւեր առնես բնաւ մի՛ վախնար, Չեմ՝ կրնար քեզի վարձատրել խելացի ըլլալուդ համար չեմ կրնար պատժել՝ տխմար մը ըլլալուդ, եւ նոյն իսկ եթէ օր մը տեսնեմ, երբ 13-14 տարեկան ըլլաւ, թէ ուսումները քեզի կը ձանձրացնեն և թէ քու գործունէութիւնդ գիրքերէ դուրս զբաղում մը կ'ուզէ, բնաւ չպիտի նեղանամ, առաջուան պէս պիտի սիրեմ քեզ, վստահ եղիր ասոր, և զպրոցէն հանելով արհեստի պիտի դնեմ քեզ:

Այս կէտին հասնելով ձայնս աւելի բարձրացուցի, որպէս զի խօսքերս աւելի լաւ տողորուին սրտին մէջ:

— Բայց իմ ուզածս, իմ ուզածս, կ'իմանա՞ս, ինչ որ ես իրաւունք ունիմ քենէ պահանջելու և որու համար դատարանին մէջ լաւ նիշեր առնելու պէտք չկայ, սա է թէ՛ դուն խելօք կենալու ես, Հէ՛, գիտե՞ս ինչ ըսել է ասիկա: Մինչեւ հիմայ ձգեցի որ քիչ մը ուզածդ ընես, որովհետեւ տակաւին շատ պզտիկ էիր, բայց հիմայ, ծերուկս, խոշոր տղայ մը եղար: Այլ ասկէ ետքը հնազանդելու է. հնազանդիլ առաջին խօսքին. առաջին շարժումին՝ առանց վիճելու: Երբ օր մը զպրոցին մէջ գէշ վարք մը ունենաս՝ այն իրիկունը շատ խիստ պիտի վարուիմ քեզի հետ, որովհետեւ ամէն տղայ, ապուշ կամ խելացի կրնայ հնազանդ և ուշադիր ըլլալ եթէ ուզէ: Բնաւ չպիտի ներեմ վարքի համար գէշ թիւ մը, բնաւ: Երբ գրասեղանիդ վրայ կը նստիս, ուշադրութիւն ըրէ, աչքերդ դաստիարակիդ վրայ տնկած, ականջներդ բաց, ձեռքերդ իրարու քով բերած... լուռ կեցիր. եթէ քովի ընկերդ քեզի խօսի՝ մի պատասխաներ: Եթէ ուրիշները անկարգութիւն ընեն՝ դուն անոնց մի՛ ընկերանար: Եթէ մէկը քեզի չարածճիւղութիւն մը ընէ դասի ժամանակ՝ բնաւ ձայն մի հաներ, բայց երբ դասը լմնայ և պարտէզ ելլէք, քեզի նեղացնողին քովը գնայ և քանի որ բուսական ուժով ես քանի մը հատ փակցուր իրեն...:

Երեք ստանաններս անտնկ սրտանց խնդացին որ քիչ մնաց ծանրութիւնս կորսնցնէի:

— Հասկցա՞ր հիմայ.

— Այո՛ հայրիկ:

— Երկու քնիս ալ մէյմէկ պատասխանատուութիւն ստանձնենք. դուն՝ քու աշխատութիւնդ, ես ալ՝ վարքը:

— Այո՛ հայրիկ:

Դպրոցին ժամն էր, «պատասխանատու» անձը պարտապ պաշուակը առաւ և եղբայրներուն ձեռքը սեղմեց:

Արձանագրութիւնը չուտով կատարուեցաւ: Դաստիարակը ընկերներ ցոյց տուաւ և զաւակս վազելով անոնց քով գնաց:

— Ըսել է, պօռացի վերջին անգամ ըլլալով, ա'լ որոշուեցաւ: Լաւ վարք:

— Այո՛: Հայրիկ:

*
*
*

Տուն դառնալէ առաջ ուզեցի քիչ մը առանձնանալ: Դպրոցականի այս սկզբնաւորութիւնը անցեալը կը յիշեցնէին. միտքս կը բերէի իմ տղայութիւնս, աշակերտութեան տարիքս, և յիշելով իմ տղուս տուած խիստ խրատներս իղճիս կը հարցնէի թէ ի՞նչ տեսակ վարք մը ունեցած էի այդ հասակիս մէջ: Խիղճս լուռ կը մնար, որովհետեւ յիշողութիւնս չէի կրնար հասցնել մինչեւ այդ հեռաւոր տարիները. սակայն քանի մը մանրադէպեր կրնայի տակաւին միտք բերել:

Պատմութեանս ասենները երկրորդական վարժարանի մը աշակերտ էի: Գծագրութեան դասի համար, անգամ մը Սոկրատի արձանը դրած էին մէջտեղը՝ զոր պիտի ընդօրինակէինք: Դասատունիս աղքատիկ մէկն էր, տարիքը բաւական առած, հինուկ հագուստներով և մաշած՝ իւղոսած գլխարկով մը որ դպրոցին մէջ իբր պատմական առարկայ մը կը խօսուէր վրան: Օր մը երբ դասարանին ծայրը նստող աշակերտի մը գծագրութիւնը սրբագրելու զբաղած էր, ընկերներէս մին կամացուկ մը գնաց յափըշտակեց անոր գլխարկը՝ որ աթոռի մը վրայ թողուած էր: Ձեռքէ ձեռք շուտով դասարանին շրջանը ընել տուինք անոր և արձանին մօտիկ նստող տղան՝ առանց դասատունին ուշադրութիւնը արթնցնելու գաճէ Սոկրատին գլուխը անցուց զայն: Չարածը՝ ճիւղթիւն մըն ալ ընելու կարգը իմս էր. ոտքիս մատներուն վրայ կոխելով արձանին քովը գացի եւ գլխարկին երկու կողմէն բռնելով՝ ամբողջ ծանրութեամբս կախուեցայ. յատակը քակուեցաւ և գլխարկը մինչեւ արձանին ուսերը իջաւ. խնդուքի ժխոր մը դասարանը լեցուց. ուսուցիչը գլուխը վեր առաւ եւ ես՝ դեռ տեղս երթալու ժամանակ չունեցած՝ անիկա տեսաւ եղած չարութիւնը ու յանցաւորը. ակնարկս հանդիպեցաւ անորինին և աչքերնիս իրարու սեւեռած միացինք. նայուածքին մէջը տեսակ մը վայրագ ատելութիւն կը շողար՝ զոր մինչեւ այն օրը բնաւ չէինք տեսած իր վրայ: Պատիժս անխուսափելի էր, յաջորդ օրուան արձակուրդս պիտի կորսնցնէի: Բայց չուզեցի զգացածս յայտնի ընել ընկերներուս առջեւ, և ձայնս կրցածիս չափ ամուր հանելով ըսի:

— Այդ ջնուցի խողովակը (սոպա պօրուսը) մաքրուիլ կ'ուզէր:

— Պարոն :

— Իրա՛ւ կ'ըսեմ :

Ամբողջ դասարանը ինքզինքը կորսնցուցած կը պոռար :

— Քըս , քըս , Սոկրատ , խա՛ծ :

Ծերուկը քովս հասած էր . վրաս խոր նայուածք մը ձգեց ու ըսաւ տխուր ձայնով մը .

— Պարոն , կը կարծէի թէ իմ աղքատութիւնս , զոր ամէն մարդ գիտէ , ինծի կը պահպանէր ասանկ նախատինքի մը դէմ . կը խոստովանիմ որ սխալած եմ եւ մանաւանդ քու նկատմամբ : Խորհեցէք , խնդրեմ , ըրածնուդ վրայ , ես ալ այս իրիկուն ընե-
լիքս գիտեմ :

Բայց բան մըն ալ չըրաւ , գուցէ մտածելով թէ ինծի տըր-
ուելիք պատիժը՝ դպրոցէն արտաքսումս պիտի ըլլար : Սակայն
ես , յաջորդ օրը , միւս օրը և շատ օրեր խորհեցայ :


* * *

Այս դառն յիշատակը ամբողջ ուշո գրաւած էր , առանց զգա-
լու պտոյտս վերջացուցեր էի և տուն կը դառնայի : Յիշեցի առ-
տուան տուած խրատներս բարի վարժ ունենալու վրայ և խպնե-
ցայ ինքնիրենս :

... Գիշերը երբ ննջասենեակս կ'ելլէի , դպրոցականին սենեա-
կին առջեւէն անցայ . անոր շնչառութեան յուզումէն գուշակեցի
թէ այլ եւս չէր երազեր իր պատմութեան պարիկներուն վրայ ,
և թէ զանոնք այլեւս թողած էր նոր ընկերներու տեղ՝ Այբե-
նարանը , Քարետախտակը , Թիւերը , Լոութիւն , ... Կեան-
քը՝ ... Ինծի անանկ եկաւ որ Գլխարկներ Պատուողը՝ թէեւ իր
հայրն ալ ըլլար՝ պարտաւոր էր իրմէ ներում խնդրել : Եւ ես
խնդրեցի այդ , թէեւ ցած ձայնով :


Բարեբաղդաբար՝ իմ անձնասիրութեանս համար՝ ստահակը կը
քնանար :

Ժ. տ'է.



«Հանրագիտակ»ի 26րդ թիւին մէջ առաջարկուած թուաբա-
նական երկու խնդիրներուն լուծման պայմանաժամը (0 դոստ , 1)
անցած ըլլալով , ասկէ ետքը եկած լուծումները նկատի չեն առ-
նուիր : Մօտ թիւով մը պիտի հրատարակենք սոյն մրցումին ար-
դիւնքը՝ որ խիստ շահեկան է , օտարազգի դպրոցականներ ալ
մասնակցած ըլլալով անոր՝ ֆրանսերէն պատասխանով :


Ձեր թիւով առաջարկուած Շիշին լուծումը, զոր շրկած է
էրպա՛տէն Պ. Արմենակ Պ. Մանուկեան:



Ձեր թիւին մէջ եղած 1. Մտամարզային հարցումին լու-
ծումն է ՇՈՂ-ԳԱՄ:

ՄՏԱՄԱՐԶԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

1. Մեր ընթերցողներէն ո՞վ կրնայ սոյն կտորները իրարու
քով բերելով բուն պատկերը կազմել:



ԱՓՕՍԹՕԼԻՔ ԻՆԹԻԹԻԻԹ Ի ԳՕՆԻԱ

(ՃԵՆԱՆԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ)

Վարժարանս կ'աւանդէ՝ մեր երկրին մէջ գտնուող Ամերիկեան միւս գոլէճներուն յար և նման ծրագրով մը՝ Օսմ., Հայ., Անգլ., Ֆրանս., եւ Յուն. (Յունաց համար) լեզուներ, նաեւ Բնական, Բնապատմական, Ուսողական, Փիլիսոփայական եւն. գիտութիւններ, իսկ իբրեւ արուեստ կ'ուսուցանէ կահագործութիւն, լուսանկարչութիւն և Զութակահարութիւն: Բաց աստի յառաջիկայ տարեշրջանէն սկսեալ պիտի հաստատէ երեք տարուան

Վաճառականական Դասընթաց

մը՝ ուր մասնաւոր խնամքով պիտի դասախօսուին գործնականապէս Առեւտրական Աշխարհ., Թուար., Տոմարակալութ., Օրէնագրութիւն, Վաճառականական և Սեղանաւորական գործողութիւններ, Պաշտօնական և ոչ-պաշտօնական ամէն տեսակ գրութիւններ՝ Օսմ. Հայ., և Ֆրանսերէն լեզուներով, եւն. եւն., եւ սոյն ճիւղին աշակերտները ստիպեալ չպիտի ըլլան գոլէճական միւս դասերուն հետեւելու: Տարակոյս չկայ թէ այս նորութիւնը որ կը պակսէր մեր մէջ՝ մեծ օգուտներ պիտի ընծայէ հասարակութեան: Գիշերօթիկներու դպրոցական տարեթոշակն է միայն 10 Օսմ. ոսկի, նոր տարեշրջանը պիտի սկսի Սեպտ. 11/24 ին: Աւելի մանրամասն տեղեկութեան համար դիմել առ Տնօրէնն Վեր. Տք. Ա. Յ. Հայկազեան. ի Գոնիա:

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

Նիկոմիդիա. Յ. էֆ. Դ. — «Առաջնորդ Վաճառականացի» մասին ըրած հարցումներնուղ չենք կարող պատասխանել, կրնաք Սիմօն էֆ. Ձեռնիկէճեանի դիմել եւ լիովին տեղեկութիւն ստանալ: — Ձեր ըրած յանձնարարութիւններէն երկուքը կը զրկուի, եւ մէջ արժէքը մանտարոստով զրկէք: Փոստի ծախքով միասին 38 զրշ:

Գոնեա. — Տ. էֆ. Տ. — Ստացանք:

ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ Խմբագրութեան, Բաժանորդագրութեան եւ ո՛ր եւ է գործառնութեան առթիւ հարկ եղած դիմում, գրութիւն կամ նամակ պէտք է ուղղուին միմիայն

ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

որ միակ վարիչն ու պատասխանատուն է թերթին:

ԽՄԲԱԳՐԱՊԵՏ-ԱՐՏՕՆԱՏԷՐ
ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐԻՉ-ՀՐԱՏԱՐԱԿԻՉ
ՆՇԱՆ Կ. ՊԷՐՊԷՐՍԱՆԻ

Կ. Պոլիս, Պապը Ալի ճատտէսի, Թիւ 38, Մանգումէի տպարանին կից

1. Die erste Art der ...
 2. Die zweite Art der ...
 3. Die dritte Art der ...
 4. Die vierte Art der ...
 5. Die fünfte Art der ...
 6. Die sechste Art der ...
 7. Die siebente Art der ...
 8. Die achte Art der ...
 9. Die neunte Art der ...
 10. Die zehnte Art der ...

11. Die elfte Art der ...
 12. Die zwölfte Art der ...
 13. Die dreizehnte Art der ...
 14. Die vierzehnte Art der ...
 15. Die fünfzehnte Art der ...
 16. Die sechzehnte Art der ...
 17. Die siebenzehnte Art der ...
 18. Die achtzehnte Art der ...
 19. Die neunzehnte Art der ...
 20. Die zwanzigste Art der ...

1	Die erste Art der ...
2	Die zweite Art der ...
3	Die dritte Art der ...
4	Die vierte Art der ...
5	Die fünfte Art der ...
6	Die sechste Art der ...
7	Die siebente Art der ...
8	Die achte Art der ...
9	Die neunte Art der ...
10	Die zehnte Art der ...
11	Die elfte Art der ...
12	Die zwölfte Art der ...
13	Die dreizehnte Art der ...
14	Die vierzehnte Art der ...
15	Die fünfzehnte Art der ...
16	Die sechzehnte Art der ...
17	Die siebenzehnte Art der ...
18	Die achtzehnte Art der ...
19	Die neunzehnte Art der ...
20	Die zwanzigste Art der ...

21. Die einundzwanzigste Art der ...
 22. Die zweiundzwanzigste Art der ...
 23. Die dreiundzwanzigste Art der ...
 24. Die vierundzwanzigste Art der ...
 25. Die fünfundzwanzigste Art der ...
 26. Die sechsundzwanzigste Art der ...
 27. Die siebenundzwanzigste Art der ...
 28. Die achtundzwanzigste Art der ...
 29. Die neunundzwanzigste Art der ...
 30. Die hundertste Art der ...

ՆՇԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԻԱՆ ԵՆ ԿԱՐԱՊՅՏ Ս. ՏԵՄԻՐԵԱՆ, պատիւ ունին ծանուցանել գրասէր հասարակութեան թէ իմաստաւորի Գաւառի վարժարանաց տեսչութեանց ղեկւորութիւն մը ըլլալու նպատակաւ նոր ԳՐԱՏՈՒՆ մը հիմնած են որ պիտի զբաղի հետեւեալ գործառնութիւններով:

Կը հայթայթէ, թէ Մայրաքաղաքիս մէջ և թէ Գաւառներու մէջ, Հայերէն, Թուրքերէն, Ֆրանսերէն, Անգլիերէն ու Գերմաներէն հրատարակութիւններ՝ Դպրոցական Դասագիրք, Վէպ, Թատրերգութիւն, Գիտական Հեղինակութիւն, Պարբերական ու Հանդէս:

Դպրոցական գրքերու և պիտոյքներու հայթայթման մասին ամենամեծ զեղչը կուտայ (30%) իր հրատարակութիւններուն համար, իսկ միւս գրքերուն ալ համեմատական ամէնէն բարձր զեղչը) եւ վճարումներու համար անյուսալի ղեկւորութիւններ կ'ընծայէ (այս մասին յատկապէս կը բանակցինք):

ՏՊԱՐԱՆ-ԳՐԱՏԱՆԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐՆ ԵՆ	
ԻՐԱԳԻՏՈՒԹԻՒՆ, Գործնական եւ Արհեստական (Տարրական)	3 շրուշ
» » » (Միջին, Ա.)	4 »
» » » (Միջին, Բ.)	5 »
ԲՆԱՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԵՒ ԲՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ (Բարձրագոյն)	7 »
ՄԵՆՏՈՐ ՄԱՆԿԱՆՑ, Ալֆապէ Ֆրանսերէն	2 »
» » Երկրորդ Գիրք Ֆրանսերէնի	4 »
ԱՌԱՋՆՈՐԴ ՄԱՆԿԱՆՑ Երրորդ » »	6 »
ԵԱՂԿԱՔԱՂ ՄԱՆԿԱՆՑ ԴԱՍԵՐՈՒ, Հայ Ընթերցարան	3 »
» ՏԻՊԱՐ ԴԱՍԵՐՈՒ, Միջին Ընթացք	4 »
ԵԱՂԿԱՔԱՂ ՀԱՅ. ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ	4 »
ՀԻՆ-ՈՒԽՏԻ (Սրբազան Պատմութիւն) ՍԱՀԱԿԵԱՆՑ	4 »
ՆՈՐ ՈՒԽՏԻ (» » »)	4 »
ՍՈՒՐԲ ԵՐԿԻՐ Կամ Նկարագրութիւն Ս. Երուսաղէմի	12 »
ԱՂՕԹԱԳԻՐԲ Հայ. Ս. Եկեղեցւոյ (Բ. Տիպ)	10 »
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՐԵՑՈՅՑ	6 »
ՏՕՆԱԿԱՐԴ Հայ. Ս. Եկեղեցւոյ	12 »
ԳԱՄԷԼԻԱԶԱՐԴ ՏԻԿԻՆ	8 »
ԲՈՒՐԱՍՏԱՆ ՄԱՆԿԱՆՑ	10 »

Սոյն ցանկը որ կը պարունակէ Իրագիտութեան, Հայ Ընթերցանութեան, Ֆրանսերէնի, Կրօնագիտութեան ամբողջական դասընթացներ, հետզհետէ պիտի ճոխանայ ուրիշ դասընթացներով, ամէնակարճ ժամանակի մէջ:

Գրատունս կը հայթայթէ նաեւ Մանկապարտէզի և Ֆրէզ-պէլեան նուէրներ և առարկաներ, ինչպէս նաեւ ամէն տեսակ պիտոյք՝ թուղթ, տետրակ, մատիտ, աշխարհացոյց կամ համայնապատկեր քարդեր, եւայլն:

Գրատանս Տնօրէնութիւնը իր բազմամեայ ուսուցչական փորձառութիւնով և բազմաթիւ ծանօթ ուսուցիչներու հետ ունեցած յարաբերութիւնով կը փափաքի օգտակար ըլլալ թէ մայրաքաղաքիս և թէ գաւառներու Պատ. Թաղ. Խորհրդոց, Հոգարարձութեանց և վարժարաններու տեսչութեանց, դպրոցական ամէն տեսակ պէտքերու հայթայթումէ զատ, ղեկւորութիւն ընծայելով նաեւ ուսուցիչ և վարժուհի հայթայթելու և փափաքուած պաշտօնին համեմատ պաշտօնեայ ղրկելու մասին:

Հասցէ՝

Տպագրիչ Նշան Կ. Պերպերեան

Կ. ՊՈԼԻՍ, Պապ Ալի ճատտէսի, Թիւ 38